ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԵՐՈՒՄ (1918 թ. ապրիլ – հուլիս)

Հայոց ազգային խորհրդի (ՀԱԽ)[1] 1918 թ. ապրիլի 12-ի/մարտի 30-ի, հունիսի 24-ի և հուլիսի 6-ի արձանագրությունները նոր փաստեր են պարունակում Հովհ. Թումանյանի կյանքի մասին այն ծանր ժամանակաշրջանում, երբ ձևավորվում էր մեր անկախ պետությունը, և ժողովուրդը լարված պայքար էր մղում իր գոյապահպանության համար: Բրեստի հաշտության ստորագրման պահից նա հստակ գիտակցում էր, որ հեղափոխությունն արյունալի և դրամատիկ էջ էր լրացնում հարազատ ժողովրդի պատմության մեջ: Համընդհանուր այդ ճգնաժամից երկրամասը փրկելու համար հարկավոր էր խաղաղություն հաստատել. «Խաղաղություն, միայն խաղաղություն է հարկավոր հիմա բոլոր ժողովուրդներին»[2]: Նամանավանդ, երբ արտաքին ներխուժումը սաստկացնում էր ազգամիջյան հայ-թաթարական կոտորածը[3]: Միևնույն միտքն է հնչել ՀԱԽ-ի, Անդրկովկասյան կոմիսարիատի և Սեյմի հայ անդամների, Կարսից, Երևանից, Ալեքսանդրապոլից ու հանրապետության շրջաններից գործուղված պատվիրակների, կուսակցությունների և զինվորական ատյանների ներկայացուցիչների արտակարգ խորհրդակցության ժամանակ, որը գումարվել է 1918 թ. ապրիլի 19–21/6–8-ին Ալեքսանդրապոլում[4]: Ել-

---

[1] *Արևելահայ կամ Հայոց ազգային խորհուրդը գործել է Թիֆլիս քաղաքում 1917 թ. սեպտեմբերի 16-ից (հին տոմարով) մինչև 1918 թ. հուլիսի 15-ը: Նրա առաջին կազմում ընդգրկվել է 15 հոգի՝ Լ. Աթաբեկյան, Հ. Այվազյան, Ա. Ահարոնյան, Ն. Աղբալյան, Տ. Բեկզադյան, Ա. Գյուլխանդանյան, Ա. Երզնկյան, Պ. Զաքարյան, Խ. Կարճիկյան, Կ. Ղազազյան, Ս. Մամիկոնյան, Ղ. Տեր-Ղազարյան, Հ. Տեր-Օհանյան, Ս. Հարությունյան ու Ռ. Տեր-Մինասյան: Ընդ որում, Կորյուն Ղազազյանի անունը ճիշտ չեն գրել, բայց հինգերորդ նիստից հետո վրիպումն ուղղել են [տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 1, 2 շրջ.]: 1918 թ. հուլիսի 19-ին ՀԱԽ-ը տեղափոխվել է Երևան ու իր աշխատանքը շարունակել որպես Հայաստանի Հանրապետության Խորհրդարան: Բառի բուն իմաստով՝ այդ ատյանը պառլամենտ է դարձել 1919 թ. օգոստոսի 1-ից՝ համազգային ընտրություններից հետո:*

[2] *Հ ո վ հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Երկերի լիակատար ծողովածու (այսուհետև՝ ԵԼԾ), հ. 7, Քննադատություն և հրապարակախոսություն 1913–1922, Երևան, 1995, էջ 352: Նախադասությունը ռուսերեն է՝* «Мир только мир нужен теперь всем народам».

[3] *Նույն տեղում:*

[4] *Տե՛ս Հ. Ա վ ե տ ի ս յ ա ն. Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 144, Համահայկական խորհրդակցություններ (1912–1920 թթ.), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբ.՝ Ա. Վիրաբյան, Երևան, 2004, էջ 332, 336: Երրորդ փաստաթղթում հրապարակվող Հովհ. Թումանյանի ելույթի մասին տեղեկացվում է Հ. Ավետիսյանի վերը հիշատակված մենագրության 152-րդ էջում: Երկրորդ և երրորդ փաստաթղթերի*

նելով մուսավաթի՝ ամբողջ երկրամասը անկախ հռչակելու թիֆլիսյան պահանջներից՝ մասնակիցները քննարկել են ստեղծված իրավիճակը, իրենց քայլերը, իշխանության գործունեությունը, Բրեստ-Լիտովսկի հաշտության և ինքնապաշտպանության խնդիրները: Նիստերի եզրափակիչ օրը Հովի. Թումանյանը հանդես է եկել երկու ելույթով՝ ընդգծելով խաղաղության, միասնության ու հարևանների հետ բարիդրացիական հարաբերությունների կարևորությունը:

Բայց հակառակ նրա ցանկությանը, հարձակվող թուրքական բանակի հրամանատարության հետ տարվող բանակցությունները ձգձգվում էին: Հետևաբար, 1918 թ. մայիսի 19-ին ելույթ ունենալով ՀԱԽ-ի խառը նիստում, ՀԱԽ-ի անկուսակցական անդամ Ս. Մամիկոնյանը հայտարարել է Լոռու գունդը վերակազմելու անհրաժեշտության մասին: Նա դիմել է Հովի. Թումանյանին՝ Լոռի մեկնելու, գունդը կարգի բերելու և այն Թ. Նազարբեկյանի հրամանատարության տակ դնելու առաջարկով[5]: Հայկական զորաբանակի (կորպուսի) հրամանատարին՝ սպայակույտով հանդերձ, ծրագրում էին տեղափոխել Ղարաքիլիսա: Ս. Մամիկոնյանի առաջարկով Մեծ լոռեցուն հաստատում են Ղարաքիլիսայի պաշտպանության հարցերով ՀԱԽ-ի ընդհանուր լիազորի պաշտոնում: Նրա պատասխանատվության գոտին ընդգրկում էր Լոռին, Ղազախը, Շամշադինը, Փամբակն ու Բորչալուն: Հովի. Թումանյանը ստանձնած պարտականությունների կատարումն ավարտել էր 1918 թ. հունիսի 27-ին, երբ հրաժարական է տվել[6]: Ըստ պաշտոնական տվյալների՝ նա ՀԱԽ-ի լիազորի պարտականություններն իրագործել է 1918 թ. մարտի 15-ից հունիսի 15-ը[7]:

Նկատենք, որ Թումանյանի պատասխանատվության տակ գտնվող վայրերում տիրում էր անկառավարելի իրավիճակ, զինվորականներն ու տեղի բնակչությունը գործում էին ինքնուրույնաբար, ու սա վերաբերում էր ինչպես ջոկատների կազմակերպման ոլորտին, այնպես էլ բնակիչներին և գաղթականներին տարատեղելու ճիգերին: Հովի. Թումանյանը, թուրքական բանակի սրընթաց հարձակման և մայիսի 28-ին Ղարաքիլիսայում տեղի ունեցած կոտորածի ու գազանությունների կենդանի վկան է եղել[8]:

Բանաստեղծը Թիֆլիս է վերադարձել հունիսի 24-ին ու դեպքերի վերաբեր-

---

ձեռագրերը համեմատվել ու ճշտվել են ՀԱԱ-ի գլխավոր արխիվագետ Հ. Ճաղարյանի հետ միասին:

[5] *ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 213 շրջ.:*

[6] *Հ ո վ հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. ԵԼԺ, հ. 10, Նամակներ 1905–1922, Երևան, 1999, էջ 288, 644, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 123, թ. 30:*

[7] *Լ. Մ. Կ ա ր ա պ ե տ յ ա ն. Հովհաննես Թումանյանի հասարակական գործունեությունը: (Դրվագներ), Երևան, 1992, էջ 211–212, 215: Տե՛ս նաև Թումանյանը և հայոց պատմական ճակատագիրը, կազմ. Լ. Հ. Հախվերդյան, խմբ. Լ. Ա. Բարսեղյան, Երևան, 2000, էջ 24, 216, 271, Հ. Ա յ վ ա զ յ ա ն. Զորավար Անդրանիկ և Հովհաննես Թումանյան, Երևան, 2004, էջ 162, Ս. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Թումանյանը և հայ գրողների կովկասյան ընկերությունը, Երևան, 2007, էջ 126, 307:*

[8] *Նման անմիջական վկայություն կա պորուչիկ Ալեքսեյ Կոլմակովի 1919 թ. փետրվար-ապրիլին հրատարակած հոդվածաշարում* [*տե՛ս* П о р у ч и к А л е к с е й К о л м а к о в. «Историческая армянская рота (составил и подготовил к изданию А. Закарян). Ереван, 2009, с. 29–31].

յալ զեկուցում ներկայացրել Հայոց ազգային խորհրդում: Մի շարք հարցերի քննարկմանը զուգահեռ՝ նա անդրադարձել է մի կարևոր հանգամանքի՝ Ղարաքիլիսայի վճռորոշ մարտերում մտերիմ ընկերոջ՝ Ա. Օզանյանի[9] բացակայությանը: Որոշ ժամանակ անց՝ հուլիսի 21-ին, նա թվել է նաև այլ կարևոր հանգամանքներ. Ղարաքիլիսան թուրքերի հարձակման երկրորդ հիմնական ուղղությունն էր, ու նրա արգելքը հաղթահարելու դեպքում հնարավոր էր գրոհել Թիֆլիսի վրա: Հատկապես այդ կարևոր թևն ու ամենից շատ՝ երկաթուղին, վստահել են արևմտահայ դիվիզիայի մարտիկներին[10]: Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ այդ զորամասն անգործ ու պարապ չի մնացել: 1918 թ. մայիսի 21-ին, օրինակ, հայկական զորաբանակի սպայակույտի պետ գեներալ-մայոր Ե. Վիշինսկին Ազգային խորհրդին է փոխանցել Անդրանիկի հեռագիրը: Այն պարունակում էր արևմտահայ զինուժի՝ մայիսի 13-ից 18-ը ծավալած ակտիվ մարտերի մասին հաշվետվություն[11]: Այնուհետև՝ մայիսի 25-ին, ՀԱԽ-ը նոր զեկուցագիր է ստացել, թե թուրքական ռազմական ուժերը պատրաստվում են գրոհել Ջալալօղլու վրա, և Ա. Օզանյանն առաջարկում է մարտի մեջ մտնել[12]: Սակայն զորաբանակի հրամանատար Թ. Նազարբեկյանն իր զորքերին դեպի Դիլիջան նահանջելու հրաման է արձակել, որն արվել է Ազգային խորհրդի մայիսի 21-ի կարգադրությամբ: Ըստ այդմ՝ պահանջվում է անհապաղ բանակցություններ սկսել օսմանցիների հետ՝ ապահովելով հակառակորդի ազատ տեղաշարժը մինչև Ջուլֆա[13]:

Ողբերգական այդ օրերին Անդրանիկին հասցեագրած Հովհ. Թումանյանի քննադատությունը բացառիկ երևույթ չի եղել, դրան հավելվել է բանաստեղծի՝ 1918 թ. հունիսի 28-ին Ազգային խորհրդին և Անդրկովկասյան կոմիսարիատին տված հավասարապես տհաճ գնահատականները: Ատյաններ, «որոնց ապիկարությունը հասնում է[ր] ոճրագործության»[14]:

Հրապարակվող չորրորդ փաստաթղթում Հովհ. Թումանյանն իր ելույթում հիշատակել է նաև թուրքական սպայակույտին, որը հաստատվել էր Լոռվա խորքում՝ Ջորագետում: Դրանից հաշված օրեր անց, Խորհրդի անդամներին ներկայացվել է Մ. Պապաջանյանի հունիսի 21-ի թվակիր նամակը՝ Վեհիբ փաշայի հետ ունեցած հանդիպման մասին[15]: Փաշան հրաժարվում էր օսմանյան զորքերը Հայաստանի սահմաններից դուրս հանել, ինչը հիմնավորում էր վրաց-գերմանական հարձակման վտանգով: Նա նաև Բաթում էր հրավիրում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչներին, որպեսզի քննարկեն գաղթականների խնդիրը: Փաշան խոստացել է երեք ավտոմեքենա տրամադրել՝ ուղևորության համար, հեռագրալար Բաթումում՝

---

[9] *Թումանյանը և հայոց պատմական ճակատագիրը, էջ 219, Հ. Այվազյան. նշվ. աշխ., էջ 128:*

[10] *Հովհ. Թումանյան. ԵԼԺ, հ. 7, էջ 355:*

[11] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 21, թ. 69:*

[12] *Նույն տեղում, թ. 76:*

[13] *Նույն տեղում, թ. 73–74, Ա. Հ. Հարությունյան. Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984, էջ 190, 192–193:*

[14] *Հովհ. Թումանյան. ԵԼԺ, հ. 10, էջ 287:*

[15] *ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 273 շրջ.:*

շաբաթը մեկ-երկու ծածկագիր նամակ ուղարկելու, և նույնիսկ վարկ տրամադրել՝ հայերի համաձայնության ու ռազմական սերտ համագործակցություն հաստատելու դեպքում: Հասկանալով, որ Բաթումի հաշտությունից թուրքերի հրաժարման վտանգն իրական է, հայկական պատվիրակությունը (Ս. Հարությունյանի, Հովհ. Թումանյանի, մարտի 30-ից ապրիլի 2-ը Բաքվի հաջողված հայկական ինքնապաշտպանության շտաբի երկու պետերից մեկի՝ գեներալ Ի. Ս. Բաղրամովի կազմով ու թարգմանիչ Միրզոյանի մասնակցությամբ) մեկնել է Բաթում՝ Վեհիբին փոխարինած Էսադ փաշայի հետ բանակցելու համար: Վերջինս Ղարաքիլիսան գրաված դիվիզիայի հրամանատարն էր, ով զինվորներին պաշտոնապես թույլ էր տվել բազմօրյա սանձարձակություն ու կոտորած սարքել քաղաքում ու Համամլո[16] և Նալբանդ, Ավդիլբեկ[17], Վարդանլի[18], Ղշլաղ[19], Բզովդալ[20], Եղաբլու[21], Սարմուսախլի[22], Դարպաս[23] գյուղերում[24]: Փաշային ասվում է, թե հարկավոր է թույլատրել գաղթականների տունդարձը, և որ թուրքական բանակը պետք է հեռանա փոքրիկ Հայաստանի Հանրապետության սահմաններից: Հովհ. Թումանյանը խոսում է այն բռնությունների մասին, որոնց ինքը ականատես է եղել Լոռվա շրջանում: Թուրք փաշան իր հերթին ասել է, թե ասկյարները խախտում են Բաթումի պայմանագիրը, քանի որ ձգտում են կանխել վրաց-գերմանական առաջխաղացումը: Հայերն էլ պետք է ազդեցություն գործեն Անդրանիկի և Բաքվի խորհրդի վրա ու հորդորեն նրանց հրաժարվել դիմադրելու բոլոր քայլերից: Ընդհանուր փոխհամաձայնության բացակայության պայմաններում բանակցություններն ապարդյուն անցան:

Փաստաթղթերը հրապարակվում են մասնակիորեն՝ կենտրոնանալով Հովհ. Թումանյանի ելույթների վրա: Կատարվել են կետադրական և ուղղագրական որոշ շտկումներ:

ԳԱՅԱՆԵ ՄԱԽՄՈՒՐՅԱՆ

№ 1

---

[16] *Այժմ՝ Սպիտակ:*

[17] *Այժմ՝ Ծաղկաբեր:*

[18] *Այժմ՝ Խնձորուտ:*

[19] *Ալեքսանդրապոլի գավառում:*

[20] *Այժմ՝ Բազում գյուղը Վանաձորից 5 կմ հյուսիս-արևմուտք՝ Ստեփանավան տանող ճանապարհի վրա: 1918-ին ուներ մոտ 500 տուն:*

[21] *Մեր օրերում Մեղրուտ գյուղն է Գուգարքում:*

[22] *Այժմ՝ Քարաբերդ, Վանաձորից 3 կմ հյուսիս-արևելք: 1918-ին ուներ 700 տուն, բնակիչները զբաղվում էին այգեգործությամբ ու անասնապահությամբ:*

[23] *400 տուն ունեցող գյուղ Փամբակի աջ ափին: Այժմ՝ Վանաձոր քաղաքի մասը:*

[24] *Ս ե պ ո ւ հ. Էջեր իմ հուշերեն, հ. Ա, Պոսթըն, 1925, էջ 66, Մ. Ղ ա զ ա ր յ ա ն. Ղարաքիլիսայի հերոսամարտը (Ականատեսի հիշողություններից), Երևան, 2009, էջ 21, 23–24, Ս. Ա ֆ ա ն ա ս յ ա ն. Սարդարապատի հաղթանակը (Հայաստան, մայիս 1918), Երևան, 1991, էջ 65, Հ. Ա վ ե տ ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 233, Հ. Ա յ վ ա զ յ ա ն. նշվ. աշխ., էջ 175:*

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թիֆլիս, մարտի 30/ապրիլի 12, 1918 թ., 11:30, նիստ ՁԵ (85)

Տեղի ունեցավ Ազգային Խորհրդի խառն նիստը Սեյմի և կառավարության հայ անդամների ու գավառի ներկայացուցիչներից: Ներկա են՝ նախագահ Ա. Ահարոնյան, Տ. Բեկզադյան, Ս. Հարությունյան, Մ. Պապաջանյան, Ա. Բաբալյան, Լ. Թումանյան, Ա. Ստամբոլցյան, Կ. Արեյան, Հ. Քոչարյան: Հայ Ժողովրդական կուսակցության կողմից՝ Ի. Ամիրյան, Ի. Հարությունյան, Կ. Ստեփանյան, Ս. Մալխասյան, Հ. Առաքելյան, Հ. Այվազյան, Հ. Սպենդիարյան[25], Միքիթար եպիսկոպոս, Գևորգ վարդապետ [Չորեքչյան][26]: Սոցիալիստ-դեմոկրատ կուսակցությունից՝ Ա. Զոհրաբյան, Ա. Երզնկյան, Մ. Ղարաբեկյան, Հ. Բեկզադյան, Ա. Փիրումյան: ՀՀԴ կողմից՝ Վ. Տեր-Գևորգյան, Մ. Հարությունյան, Հ. Չոլախյան, Հ. Յաղջյան, Կ. Ղազազյան, Բ. Թոփչյան, Հ. Զավրյան, Հով[հաննես] Թումանյան, գավառից՝ [Արամ] Մանուկյան, Ս. Թորոսյան, Վ. Նավասարդյան, Ն. Աղբալյան:

Ա. Ահարոնյան նիստը բանալով, հաղորդում է հաշտության բանակցությունների մասին մի քանի տեղեկություններ: Թուրքիան ներկայացրել է ուլտիմատում, պահանջելով 48 ժամվա ընթացքում պատասխանել՝ թե ընդունում են Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, թե ոչ: Եթե վրացիներն ընդունեն, մենք ինչ դիրք ենք բռնելու, շարունակելու՞ ենք պատերազմը, թե ոչ:

Մ. Պապաջանյան. Առանց վրացիների մենք մենակ չենք կարող պատերազմել: Պետք է ընդունել Բրեստ-Լիտովսկու պայմանագիրը, որը, իհարկե, մեր հարցի լուծումը չէ, բայց հնարավորություն կտա փոքր-ինչ շունչ առնելու և ավելի կազմակերպված դիմագրավելու հնարավոր բարդությունների դեմ:

Հովհ. Թումանյան. Ի նկատի առնելով, որ հաց, զորք, զենք, տրամադրություն և կազմակերպչական շնորհք չկա, առաջարկում է հաշտվել, մանավանդ դրսից որևէ օգնության հույս չկա: Պետք է կենդանի ուժը փրկել: Ժողովրդին բնաջնջումից փրկել, ինչ գնով էլ լինի:

Ա. Բաբալյան. Նկարագրում է ֆրոնտի դրությունը, որին ինքը ականատես է եղել վերջին օրերում: Զորքի տրամադրությունը փոխվել է դեպի լավը. հին դիսցիպլինան մտցված է առանց տրտունջի, Սարիղամիշի նահանջը եղել է նախամտածված ձևով և չի կարելի նկատել իբրև պարտություն:

Ս. Հարությունյան. Առաջարկում է ամեն մի ֆրակցիայի իր կարծիքը հայտնելու:

Ս. Փիրումյան. Պաշտպանությունը մեկ է և ընդհանուր, չպետք է անվստահություն լինի դեպի այս կամ այն տարրերը, որ վտանգավոր է գործի համար: Պետք է ընդգրկել ընդհանուր տեսակետ և չմեղադրել վրացուն կամ հային:

Տ. Բեկզադյան. Կարիք չկա մեղավորներ փնտրելու: Թեև Հայաստանը մտնում էր վրացական ֆրոնտում և նրան չպաշտպանեցին, բայց մենք մեղադրական ճանապարհով չենք գնացել, ընդհակառակը միշտ ընթացել ենք վրա-

---

[25] *Գաղթականական խորհրդից. տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 276 շրջ.:*

[26] *1916 թվականից գաղթականների Եղբայրական օգնության կոմիտեի նախագահ, 1945-ից՝ Գևորգ Զ կաթողիկոս: Արձանագրության մեջ վավերացվել է որպես Չարքչյան:*

ցիների հետ միասին: Բայց եթե վրացիները չուզենան մեզ հետ միանալ, մենք մենակ ենք կռվելու, որովհետև ուրիշ ելք չկա:

Ա. Զոհրաբյան. Հարցը պարզ դնել. ամենավատթար դեպքում էլ կռիվը շարունակում ենք, թե ոչ: Ինչ գարանտիա կա, որ թուրքերը Կարսը գրավելով առաջ չեն գա, այդ գարանտիան չկա: Իսկ նրանց առաջխաղացումը ժողովրդի բնաջնջում է նշանակում: Ուրեմն պետք է որոշել կռվելով ենք մեռնում, թե առանց կռվի: Իհարկե լավագույն ելքը կռվի ճանապարհ է, որի համար պետք է տրամադրությունը բարձրացնել, ստեղծելով սերտ կապ վրացական և հայկական խմբի միջև:

Ա. Մանուկյան. ՀՀԴ պաշտոնապես հայտարարել է, որ մենք Ա. Չխենկելիի հետ համաձայն չենք, և նրա տեսակետը եթե ընդունվի, դուրս կգանք կառավարությունից: Ֆրոնտի և թիկունքի տրամադրությունը բարձր է. Թիֆլիսումն է տիրում լքումն: Ովքեր ծանոթ են թուրքերի քաղաքականության, Արդահանի մանրամասություններին, նրանք չեն կարող տարբեր կարծիք ունենալ: Թուրքիան ոչ մեր պայմաններին կնայի և ոչ մեր վստահացումներին. զանազան պատրվակներով նա շարունակ միջամտել է մեր գործերին: ՀՀԴ գավառական ընկերների կողմից հայտնում է, որ պետք է կռիվը շարունակել Կարսի և Բաթումի համար:

Ս. Փիրումյան. Այս խնդիրը քաղաքական և ոչ գործնական քայլ է և ուրեմն պետք է լուծել քաղաքականորեն, առանց ի նկատի առնելով հնարավորությունները: Այս կռիվը հեղափոխության կռիվ է ընդդեմ ռեակցիայի, իսկ ռեակցիան գոյություն ունի մեզանում ոչ միայն թուրքերի, այլև վրացական որոշ տարրերի մեջ, օրինակ շատ վրացի սպաների մասնակցությունը թուրքական զորքերի մեջ ընդդեմ բոլշևիկների:

Մ. Զաֆարով[27] պարզ ասել է. եթե Բաքուն չհանձնվի իրենց, կկանչեն օսմանցիներին: Պարզ է ուրեմն, որ ռեակցիոն տարրերը օսմանցիների միջոցով ուզում են իրենց դասակարգային դիրքերը ամրացնել: Եվ եթե ռեակցիոն ուժը լիներ Ռուսաստանում, նրանք այնտեղ կդիմեին: Եվ սա շատ բնական է: Հետևապես հեղափոխական դեմոկրատիան դեպի օսմանյան տիրապետությունը այլ վերաբերմունք չի կարող ունենալ, քան կռիվը ընդդեմ ռեակցիոն տիրապետության: Առաջ փոքր հույս կար թե Անդրկովկասի անկախությունը փրկություն չէ, փրկությունը պատերազմն է, որի համար պետք է դաշնակցել բոլշևիկական Ռուսաստանի հետ, ոչ թե բոլշևիզմը բերել այստեղ, այլ օգտվել նրա նյութական, ռազմական աջակցությունից: Այսպես ուրեմն չպետք է ընդունել Բրեստ-Լիտովսկու պայմանագիրը և կռիվը շարունակել:

Ս. Խաչատրյան. Խնդիրը պարզ է, խոսելը հուսահատեցնում է, Թուրքիան ոչ մի պայմանով չի կանգնի և առաջ է շարժվելու անգամ առանց պատրվակի: Այնպես որ ուրիշ ելք չկա, թեկուզ մնանք մենակ, պետք է կռվենք, հարկավոր է լարել ուժերը, ոգի ստեղծել:

Ա. Զոհրաբյան. Թուրքերի պահանջը՝ անկախություն հայտարարել, մի միջոց է մեզ Ռուսաստանից անջատելու և մենակ թողնելու: Թեև Թուրքիան խոստացել է միջազգային գրավական, բայց նրան չի կարելի հավատալ: Թուրքերը գալու են, իսկ եթե մնան, իրենց ներկայությամբ վատթար դրություն կստեղ-

[27] *Անդրկովկասյան կոմիսարիատի առևտրի և արդյունաբերության կոմիսար:*

ծեն: Անմիջական ռեակցիոն տարրերը գլուխ են բարձրացրել: Դաղստանում հազավաթ է հայտարարված, Բաքվում մուսավաթն է կռվում: Թուրքիան հանդիսանալու է պատվար այդ ռեակցիայի, որի դեմ պետք է կռվել: Մենք կարող ենք չհաղթել, բայց ուրիշ ելք չկա: Ժողովրդին պարզ ասել. որքան լավ դիմադրի, այնքան քիչ ցավ կտա: Բրեստ-Լիտովսկու պայմանագիրը ընդունելի չէ ոչ միայն ազգային, այլ ընդհանուր դեմոկրատական տեսակետից: Մեյմը նույնպես չի ընդունի և հավանորեն մուսավաթը դուրս կգա կամ չեզոք կմնա լավագույն դեպքում: Այդ դեպքում գումմեթի[28] կոչը կարող է ազդեցություն ունենալ:

Ա. Երզնկյան. Թուրքերը ոչ մի պայմանով չեն կանգնի, գլխավորապես այն կոտորածային քաղաքականության, որ եղել է Երևանի և Ալեքսանդրապոլի շրջանում, ուստի անխուսափելի է դառնում կռիվը: Ինքը սկզբում այլ կարծիք ուներ, բայց մոտիկից ծանոթանալով ֆրոնտի դրությանը, կարելի է որոշ հույս ունենալ: Զորքը կռվում է հերոսաբար և հրամանատարները հույս ունեն Կարսը պահելու: Ճիշտ է, դրամական և ռազմական միջոցները քիչ են, բայց պետք է ամեն միջոց գործ դնել դրամ ստանալու հարուստներից և ռազմամթերք ժողովրդից: Հարուստների վրա դնել պարտադիր խոշոր տուրք, ամեն մի ընտանիքից պահանջելով մի հրացան իր փամփուշտներով: Այս կերպ հնար կլինի պաշտպանության գործը կազմակերպելու: Ֆրոնտի դրությունը հուսահատական չէ, պետք է տրամադրություն ստեղծել: Պետք է բոլորը գնան ֆրոնտ, տեսնեն բոլորը, ապա թե վճիռ կայացնեն, որովհետև Թիֆլիսում նստածները պանիկայի մեջ են:

Ս. Հարությունյան. Երկու խոշոր կուսակցություններ պատերազմի կողմնակից են, ուրեմն Մեյմն էլ որոշելու է պատերազմել: Ա. Երզնկյանի կարծիքը արդյունք է լոկ տրամադրության, իսկ իրողությունը շատ անմխիթար է: Եթե Երևանի, Ախալքալաքի, Ղարաքլիսայի էքսցեսները շարունակվեն, իհարկե, Թուրքիան առաջ կգա միջամտելու: Մեր զորքերի տրամադրությունը երերուն է, օրինակ մի շրջանի 3.000-ից 24 են միայն ֆրոնտ գնացել: Պարեն չունինք, ալյուր չկա, հրացան, փամփուշտ նույնպես, և ժողովուրդն էլ հազիվ բան տա: Դրամ չկա, որտեղի՞ց պետք է ճարել: Իսկ տրամադրության մասին ավելորդ է խոսելը, որովհետև ժողովուրդը հոգնած է և կռվելու ոչ մի տրամադրություն չունի և ահագին քանակությամբ դասալիքներ է տալիս: Դրությունը ծանր է և պետք է հաշտություն կնքել: Այս կերպ միաժամանակ կարելի է կանգնեցնել թուրքերի առաջխաղացումը: Ինչը[29] կնպաստի մեր ուժերի կազմակերպմանը: Պետք է կենդանի ուժը պահել այն դեպքերի համար, երբ թուրքերի կողմից որևէ խախտում լինի դաշնագրի մեջ, իսկ եթե կռվենք՝ այդ ուժն էլ կորցնելու ենք:

Ն. Աղբալյան. Օրինակ բերելով թուրքերի տմարդ վարմունքը Արդահանում, Ղարաուրղանում և Ղարաղուրտում՝ գտնում է, որ հայերին նույն վիճակն է սպասում, եթե ընդունենք նրանց պայմանները: Նախ զինաթափ կանեն, հետո կկոտորեն: Այդպես է եղել, այդպես էլ կլինի: Ովքեր ասում են, թե միջոցներ չկան, սխալվում են. հաց որքան ուզեք կա Կարսի, Ալեքսանդրապո-

---

[28] *Գումմեթ – Ադրբեջանում գործող սոցիալիստական ուղղվածությամբ կուսակցություն:*

[29] *Փաստաթղթում՝ իսկ:*

լի շրջանում, որ լիուլի բավական է մեր զորքի մի քանի ամիս առնվազն: Թնդանոթի հրանյութ այնքան կա, որ ամեն թնդանոթին հասնում է 14.000 ռումբ: Լիբելի փամփուշտը մոտ 40 միլիոն է հասնում, որ հարկավոր դեպքում կարելի է փոխել, իսկ մոսինի փամփուշտը թեև համեմատաբար քիչ է, բայց առայժմ բավարար կլինի, մինչև կկարողանանք գործարան պատրաստել: Ամեն բան կա, պետք է միայն տրամադրություն և վճռականություն ունենալ: Չպետք է մոռանալ, որ թուրքերի դրությունը մեր համեմատությամբ շատ էլ նպաստավոր չէ: Նրանց թիկունքը շատ ավելի վատ է, քան մերը. գյուղերը քանդված, ճանապարհները ավերված, այնպես որ նրանց շարժողությունը չի կարող արագությամբ կատարվել: Այս բոլորը մեզ թելադրում է չհուսահատել և կռվել, մանավանդ որ ուրիշ ելք չկա:

Վ. Նավասարդյան. Բոլոր ճանապարհները փակված են մեզ համար, մեզ մնացել է միայն մեռնելու իրավունքը: Օգտագործենք այդ իրավունքը ամենալայն չափով: Եվրոպական պետությունների երաշխիքը չկա, իսկ Թուրքիան ոչ մի երաշխիք չի տալիս: Զորքը այժմ սթափված է և հերոսաբար կռվում է, պետք է միայն թիկունք մաքրել, խիստ միջոցներ գործադրելով ինտ[ե]լիգենտների, բժիշկների և սպաների նկատմամբ, որոնք զանազան պատրվակներով խուսափում են ֆրոնտ գնալու:

Հ. Թումանյան. Եթե ուրիշ ելք չկա այս դրությունից դուրս գալու և Թուրքիան էլ առաջ է գալու, իհարկե, այլևս խոսք չի կարող լինել հաշտության մասին և պետք է կռիվը շարունակել, ինչքան էլ ծանր ու դժվար լինի մեզ համար: Միայն պետք է ամեն միջոց գործ դնել թույլ չտալու էքսցեսներ խաղաղ թուրք ազգաբնակության նկատմամբ:

Մ. Ղարաբեկյան. Ընդունում է, որ այս կռիվը հեղափոխության կռիվ է ռեակցիայի դեմ, և պետք է այդ կռիվը ուղղել հայկական ռեակցիայի դեմ…

Ի. Ամիրյան. Հաշտությունը համարվում է մի ժամանակավոր դադար, մի էտապ կռվի մեջ, և եթե այդպես, պետք է միատարր կառավարություն լինի առանց մուսավաթիստների. հայերից, վրացիներից, ռուսներից և թուրքերի մի մասից, որի էական գծերից մեկը պիտի լինի Բաքվի փրկությունը:

Ա. Բարխուդարյան. Պատերազմի խնդիրը լուծելու են գեներալները, իսկ հաշտությունը՝ պատվիրակները: Հավատում է Գերմանիայի երաշխիքին, որովհետև նա թույլ չի տա Թուրքիային համամուսուլմանական պետություն կազմելու:

Ա. Ահարոնյան. Թուրքերը անպայման գալու են, իսկ պատրվակ միշտ կարող են ստեղծել: Նրանց նպատակն է հայկական տարրը ոչնչացնել Կովկասից… Նրանց ծրագիրը պարզ է. հավատալ նրանց վստահացումներին անկարելի է, և ուրեմն մեզ մնում է միայն կռվի ճանապարհը, իհարկե, վրացիների հետ միասին:

Վիճաբանությունները ընդհատվում են: Ժողովի ցանկությամբ գործնական առաջարկներ չեն արվում, միայն հանձնարարվում է Մեյմի անդամներին վճիռ կայացնելիս ի նկատի առնեն այս տրամադրությունները և գործնական քայլեր անեն այս սահմանում:

ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ.141, թ. 173 շրջ.– 176:

№ 2

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ
ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Թիֆլիս, ապրիլի 8/21, 1918 թ., 10:15, նիստ Դ (4)

Նախագահությամբ Ա. Ահարոնյանի, քարտուղար՝ Ա. Աբեղյան: Օրակարգի խնդիրներ են՝ 1) իշխանության խնդիր, 2) ինքնապաշտպանության խնդիր: Խոսել են՝ Ն. Աղբալյան, Ա. Երզնկյան, Հ. Բեկզադյան, Ս. Վրացյան, Գ. Ղազարյան, Ա. Զոհրաբյան, Վ. Նավասարդյան, Ա. Շահխաթունի, Ս. Մամիկոնյան, Ա. Ստամբոլցյան, Հ. Թումանյան, Ա. Խոնդկարյան, Բ. Ղարիբջանյան, Լ. Թումանյան, Հ. Քաջազնունի, Մ. Բունիաթյան, Ս. Հարությունյան, Պ. Զաքարյան, Լեո, Մ. Պապաջանյան:

… Հ. Թումանյան. Կովկասի ո՛չ մի ժողովրդի համար այնչափ անհրաժեշտ չէ նոր ընտրական իշխանություն, կենտրոնը, որչափ մեզ համար: Անջատում Անդրկովկասի մասերի կնշանակե կռիվ առանձին մասերի դեմ, կռիվ ոչ միայն Տաճկաստանի, այլև Ադրբեջանի և Վրաստանի դեմ, թույլ չպիտի տալ առանձին կառավարություններ ստեղծելը: Առանձին կառավարություն կնշանակե առանձին թշնամի: Բարեկամություն պիտի ստեղծել հարևանների հետ: Ժամանակն է խոստովանել, որ պարտված ենք մենք, մեր իտեալները՝ ջախջախված...

ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 123, թ. 15–20, 25:

№ 3

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ
ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Թիֆլիս, ապրիլի 8/21, 1918 թ., 18:30–20:30, նիստ Ե (5)

Նախագահությամբ Ա. Ահարոնյանի, քարտուղար՝ Ա. Ստամբոլցյան: Խոսել են՝ Հ. Քաջազնունի, Հ. Զավրյան, Մ. Պապաջանյան, Գ. Խատիսյան, Ա. Երզնկյան, Ա. Ղազարյան, Ա. Շարաֆյան, Վ. Նավասարդյան, Ա. Խատիսյան, Վ. Փափազյան, Գ. Ղազարյան, Հ. Տերտերյան, Լ. Սարգսյան, Հ. Թումանյան, Ս. Մամիկոնյան:

… Հ. Թումանյան. Առաջարկում է ստեղծել մի կամք և հեղինակություն, իսկ մեզանում երկու իշխանություն կա. Ազգային Խորհուրդ և ՀՀ Դաշնակցություն, այս հանգամանքը քայքայիչ ազդեցություն է ունենում մեր գործի վրա, ապացույց թուրք-հայկական ընդհարումները, որի հանդեպ Ազգային Խորհրդի լիազորները խաղաղարար ընթացք են բռնում, իսկ խմբերը ընդհակառակը: Պետք է վերջ տալ այս բոլորին, որովհետև հետևանքները շատ վատ կլինեն...

ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 123, թ. 21–23, 25:

-4

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թիֆլիս, հունիսի 24, 1918 թ., 21:00–00:30, նիստ ՃԼ (130)

Ներկա են նախագահ Ա. Ահարոնյան, Ս. Տիգրանյան, Մ. Ղարաբեկյան, Հ. Դավթյան, Ռ. Տեր-Մինասյան, Ա. Բաբայյան, Ն. Աղբալյան, Հ. Քաջազնունի, Խ. Կարճիկյան, Ա. Ստամբոլցյան, Ս. Մամիկոնյան, Լ. Թումանյան, Ա. Երզնկյան, Հ. Թումանյան, որ նոր է եկել Լոռուց…

III. Հովհաննես Թումանյանի զեկուցումը Լոռվա մասին:

Տաճիկներն արդեն բռնել են Դվալի գագաթները[30], Ջալալօղլին[31], Քոլագերանը[32], Դսեղը դեպի Համզաչիման[33]: Փաշան[34] նստում է Զորագետում[35]: Նախքան գերմանացիների գալը, կարծես ուզում էին գնալ, ժողովրդին պատվիրեցին դուրս չգալ, բայց երբ գերմանացիներն երևացին, նրանք նորից հետ դարձան, լավ դիրքեր բռնեցին և ակոպներ շինեցին: Եվ այժմ ամուր նստած են և բնավ մտադրություն չունեն կարծես հեռանալու Լոռուց: Գերմանացիք էլ կարծես զգում են, որ նրանց այդտեղից քշելը դժվար է, թեև տաճիկների թիվը հասնում է 1.500–2.000 հոգու: Այժմ ժողովուրդը տնքում է տաճկական տիրապետության տակ: Սոսկալի կերպով թալանում են և հարվածում մանավանդ այն գյուղերը, որոնք դեպի թուրքերն ու գերիները վատ վերաբերմունք են ցույց տվել: Եղել են նաև բռնաբարումներ: Ինքը մի շրջաբերական է գրել ժողովրդին, որ կանոնավոր զորքի դեմ թշնամական քայլեր չանեն, սակայն ժողովուրդը այն դրության մեջ է, որ կարող է էլ չհամբերել և ինքնագլուխ քայլեր անել, եթե որևէ միջամտություն չլինի:

Այնուհետև նկարագրում է Անդրանիկի կատարած գործերը ու վերաբերմունքը Ղարաքիլիսեի կռիվներում: Եթե նա ժամանակին Դվալի գագաթը բռներ, թերևս Ղարաքիլիսեի կռիվը այդ վախճանը չունենար: Ապա հաղորդում է իր տպավորությունները հայ ժողովրդի և գաղթականների մասին. [որ նույնիսկ սպանում են] նահանջող հայ զինվորին… [Գաղթականները] ամեն մեկը 3–4 հրացան ունի, բայց փախչում է, փոխանակ կռվելու… Գողացան ոչ միայն օձիքներս, որ իրանց բնավ հարկավոր չէր, այլև գերմանացիների զինվորի հրացանը, որ էս բոպեիս նրա փրկիչն է այնտեղ: Նույնը պետք է ասել հայ զինվորի մասին… Մոլոկանները և մանավանդ հույները [նույնպես] շատ վատ դեր կատարեցին Լոռվա շրջանում…

---

[30] *Դվալ – Բազումթառ, Բզովդալ՝ գտնվում է Բազումի լեռնաշղթայում, բարձրությունը՝ 2800 մետր:*

[31] *Այժմ՝ Ստեփանավան:*

[32] *Այժմ՝ Զորագետ (ավան Լոռու մարզում):*

[33] *Լեռնանցք ու գյուղ Գուգարքի շրջանում, այժմ՝ Մարգահովիտ:*

[34] *Խոսքը Վեհիբի եղբոր՝ մայիսի 28-ին Ղարաքիլիսան գրաված դիվիզիայի հրամանատար Էսադ փաշայի մասին է (տե՛ս Ս. Ա ֆ ա ն ա ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 33, 63–64):*

[35] *Գավառ Գուգարք աշխարհում ու գետ, որը խառնվում է Փամբակի հետ, կազմում Դեբեդը: Զորագետի հոսանքը Լոռու սարահարթում առաջացրել է խոր ձոր:*

ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 263–266 շրջ.:

№ 5

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թիֆլիս, հուլիսի 6, 1918 թ., 21:00–00:30, նիստ ՃԼԶ (136)

Ներկա են նախագահ Ա. Սահակյան, Ս. Մամիկոնյան, Ս. Տիգրանյան, Հ. Դավթյան, Ռ. Տեր-Մինասյան, Ա. Բաբայյան, Ա. Երզնկյան, Մ. Ղարաբեկյան, Լ. Թումանյան, Ա. Ստամբոլցյան, Ս. Հարությունյան, Ա. Մխիթարյան, կառավարության նախագահ Հ. Քաջազնունի, Բաթումի պատվիրակության անդամներ՝ Հ. Թումանյան, գեն. Ի. Բաղրամով, Երևանի ներկայացուցիչ Մարգար և Տ. Հովհաննիսյան՝ Բաքվի Ազգային ժողովի նախագահ…

II. Բաթումի պատվիրակության զեկուցումը:

Ս. Հարությունյան զեկուցում է. «Մենք՝ ես, Հ. Թումանյան, գեն. Ի. Բաղրամով և թարգման Միրզոյան մեկնեցինք և հասանք մեծ դժվարություններով, որովհետև նախօրոք չէր հայտնված նրանց: Բաթումում մեզ լավ ընդունելություն ցույց տվին: Հետևյալ առավոտ մենք տեսնվեցինք Էսադ փաշայի հետ: Ես Խորհրդի անունից ողջույնի խոսք ասեցի, հույս հայտնելով, որ մեր բարեկամական հարաբերությունները այսուհետև ավելի կամրապնդվեն: Անցանք գործի: Նախօրոք մենք պատրաստել էինք մի հուշագիր այն հարցերի մասին, որ պիտի կազմեր մեր խոսակցության նյութը, այն է սահմանների, գաղթականության և թուրք զորքի կատարած բռնաբարությունների մասին (կարդում է այդ հուշագիրը): Ամեն մի կետը մենք պարզաբանում էինք պարզ ու կտրուկ կերպով, հետո խոսեց Հովհաննես Թումանյան այն բռնությունների մասին, որոնց ինքը ականատես է եղել Լոռվա շրջանում:

Էսադ փաշան պատասխանեց. Ինքը կարգապահության ու արդարության կողմնակից է և իրենից կախված մեջոցները ձեռք կառնի բավարարելու հայերի պահանջները, թեև այդ խնդիրների վերջնական լուծումը տեղի կունենա Պոլսի խորհրդաժողովում: Մեր անկեղծ ցանկությունն է, ասաց նա, որ ձեր տերիտորիան մեծանա, եթե այժմ մեր զորքերը գրավել են որոշ տեղեր, այդ եղել է ձեր օգտին, որովհետև գերմանո-վրացական զորքերը ուզում են գրավել, մանավանդ որ գեներալ Թ. Նազարբեկյանը համաձայնվել է դրան, թեև ի հաստատություն վերջինիս գրավոր ապացույց տվեց[36]:

Ես նրան պատասխանեցի, որ գերմանացիք էլ նույնն են ասում մեզ, ավելի լավ է դուք ձեր զորքերը հետ քաշեք, մենք մեր զորքերով կպահենք մեր սահմանները, եթե չկարողանանք կդիմենք ձեր օգնության՝ իբրև բարեկամ պետության:

Նա ասաց, որ չի հավատում, թե դուք կարողանաք այդ անել: Ախալքալաքի գաղթականության մասին հայտնեց, որ շնորհիվ հայերի գազանությունների (400 մարդ սպանված) [տեղի բնակչության] մտքերը գրգռված են, առայժմ չի եբաշխավորում ապահովություն տեղական մահմեդականների վրեժխնդրությունից, ուստի պետք է առժամանակ սպասել: Ինչ վերաբերում է մասնակի

[36] *«Տվեց» բառն անհրաժեշտ է կարդալ «չտվեց», այլապես նախադասության իմաստը չի հասկացվում:*

մարդկանց, թույլատրվում է նրանց գնալ Ալեքսանդրապոլ, Կարս, անձնական գործերով, դրա համար գրություն է տվել Թահսին բեյի[37] անունով, որ այդ գործը կազմակերպի: Այն մասին թե Ղարաքլիսում 3 օր կոտորած անելու իրավունք է տրված, համարում է սխալ և ապահովություն է տալիս մարդիկ ուղարկելու քննություն կատարելու համար ոչ միայն Ղարաքլիսի, այլև մյուս վայրերի նկատմամբ:

Այդ հարցերի առթիվ մենք լրացուցիչը հուշագիր ներկայացրինք (կարդում է):

Ղարաքլիսի դեպքը հերքում են: Բաշ Ապարանից իրենք զորքերը իբր թե հետ են քաշել: Ղամարլվում հայերն հարձակվել են թուրքական զորքի վրա, 23 ասկյար սպանել և շատերին վիրավորել. այս դեպքերը վրդովեցուցիչ են, բայց չենք ուզում ընդհանրացնել և կխնդրենք նման դեպքեր այլևս չկրկնվեն:

Մենք պատասխանեցինք որ երկրից կտրված լինելով չենք կարողանում իրազեկ լինել և տեղն ու տեղը մեր ազդեցությամբ խնդիրները լուծել: Դրա համար անհրաժեշտ է, որ ճանապարհները բացվեն, սահմաններից զորքերը քաշվեն, թողնելով, որ սահմանների խնդիրը՝ իբրև ներքին գործ լուծվի մեր հարևանների փոխադարձ համաձայնությամբ:

Երբ դժվարանում էր պատասխան տալ, մենք նրա թույլտվությամբ հեռագիր ուղարկեցինք Պոլիս մեր պատվիրակության, շուտափույթ պատասխան խնդրելով:

Բայց ոչ մի պատասխան չստացանք, խոստացավ պատասխան ստացվելուն պես մեզ ուղարկել: Ապա վերջում հանձն առավ մի կտրուկ շրջաբերական ուղղելու զորքին ու ժողովրդին, որ բարեկամական հարաբերություններ պահեն հայերի հետ, խոստացավ նաև անձամբ շրջագայել նույն նպատակով: Իսկ եթե որևէ բան պատահի, դիմեք ինձ փաստերի ճշգրիտ արձանագրությամբ, իսկ եթե ինձ էլ չհավատաք, ես դյուրություն կտամ քննություն նշանակելու կատարված դեպքերի մասին:

Մեկնելիս մենք շնորհակալական հեռագիր ուղղեցինք նրան (կարդում է այդ հեռագիրը):

Բաքվի վերաբերմամբ նա տվեց մեզ մի գրություն: Խնդրում են ճիշտ կերպով իրագործել դաշնագրի այդ կետը, մանավանդ որ բոլշևիկ զորքերի մեծ մասը հայեր են: Խնդրում են, որ Ազգային Խորհուրդը լրացուցիչ հրահանգ տա գյուղացիներին, որ չդիմադրեն օսմանցոց, ինչպես այդ եղել է Կայաբաշ[38] հայ գյուղերում (կարդում է նրանց գրությունը):

Մենք պատասխանեցինք, որ հայ զորքերի բոլշևիկացման մեջ մեղավոր են տեղական թուրքերը, որոնք ճանապարհը փակեցին և թույլ չտվին հայ զորքերին հայրենիք վերադառնալու: Դրանից էլ օգտվեցին բոլշևիկները և ահագին ռոճիկներով կարողացան իրենց ազդեցության տակ գցել: Այնուամենայնիվ, Ազգային Խորհուրդը իր վերցրած պարտականությունը կատարելու է, Գան-

---

[37] *Թահսին բեյ – 1914 թ. հոկտեմբերից 1916 թ. փետրվար եղել է Էրզրումի նահանգապետ: «Թուրն էր նրանց միջև դատավորը» խոսքով՝ 1918 թ. հունվարին վերջ դրեց Սիրիայի անկախության շուրջ արաբների հետ վարած բանակցություններին:*

[38] *Այդ անունը կրում էին Արդվինից 28 կմ արևելք գտնվող և Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառում տեղակայված երկու գյուղեր:*

ձակում անհաջողության է հանդիպել, բայց նա կշարունակի այն գործը այլ ուղղությամբ (կարդում է գրավոր պատասխանը):

Այսպիսով մեր պատվիրակությանը հաջողվեց.

1) պարզել գաղթականության խնդիրը, նրանց վերաբերմունքը այդ գործին: 2) Իրավունք ստացվեց քննություն կատարելու բռնությունների և կոտորածների վերաբերմամբ: Կիսատ մնաց սահմանների խնդիրը, որ թերևս շուտ լուծում ստանա, եթե Վրաստանի հետ համաձայնության գանք: Բաքվի խնդիրը կարող է շատ լուրջ հետևանքներ ունենալ. պետք է միջոցներ ձեռք առնել այդ ուղղությամբ: Առաջարկում է սրանից բխող բոլոր խնդիրները քննության ենթարկել առաջիկա ժողովում կամ փոքր խորհրդում:

Վերջում հաղորդում է իր տպավորությունները: Նրանք միշտ փաստերով են խոսում, մենք ևս նույնն ենք անելու, եթե ուզում ենք որևէ շոշափելի բան անել: Էսադ փաշան խելոք է և դեպի հայերը լավ տրամադրված է երևում: Ավստրիացի [մի] սպա մեզ հայտնեց, որ Էսադը խելոք, հաստատական և վստահելի մարդ է, նա հակառակ է եղել կառավարության հայաջինջ քաղաքականության, ինչպես և Վեհիբ փաշան և նրանք են փոխել Էնվերի տրամադրությունը դեպի հայերը: Նրա ասելով ավստրիացիք, բոլգարացիք ուզում են, որ Կովկասում կազմվի մի կոալիցիոն խնամակալություն երեք պետությունների վրա, որովհետև հազիվ թե նրանք կարողանան ինքնուրույն գոյությունը պահել: Մի ուրիշ ավստրիացի պատմում էր, որ Տաճկաստանում մեծ դժգոհություն կա պատերազմի դեմ, իբրև դրա հետևանք Պոլսում այրված է 11.000 տուն, ահագին դասալքություն կա ամբողջ երկրում:

Երևանի ներկայացուցիչ՝ Մարգարը հայտնում է, որ իրոք Ղամարլում այդ դեպքը տեղի է ունեցել: Մեր զորամասն այնտեղից հանված է, բայց տեղացիք դիմադրել են թուրքերին, որոնցից սպանված է մինչև 38 ասկյար: Այդ առթիվ ուլտիմատում գրություն ստացվեց, հետևանքը իրեն հայտնի չէ»:

Վերջում Հովհաննես Թումանյանը հայտնում է, որ, ինչպես երևում է, Վեհիբ փաշան շրջաբերական է ուղարկել հայերի հետ լավ վարվելու, լավ կլինի, որ Ազգային Խորհուրդը իր կողմից մի կոչ ուղղի ժողովրդին նման բովանդակությամբ:

ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 285–290 շրջ.: